

ԿԱՐԾԻՔ

ԱՄԻՐ ՄԵՀԴԻԻ ԶԵՅՂԱՄԻԻ «ԷԹՆՈՆԻՄԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՐՍԻՑ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (IX-VXI-ԴԱՐԵՐ)» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հրապարակային պաշտպանության ներկայացված բարեկամ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, երիտասարդ հետազոտող Ամիր Մեհդիի Զեյղամիի «Էթնոնիմների իմաստային զարգացումը պարսից դասական գրականության մեջ (IX-XVI դարեր)» խորագիրը կրող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է միջնադարյան արաբա-իսլամական ժամանակաշրջանում զարգացման տարբեր փուլեր ապրած պարսից դասական գրականության՝ թեմայի շարադրման համար հույժ կարևոր ավելի քան 200 տեքստերի ուսումնասիրությանը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ VII դարի 30-40-ական թվականներից իսլամի դրոշի ներքո ձեռնարկված արաբական արշավանքների արդյունքում ձևավորված արաբական խալիֆայության կազմի մեջ շուտով ընգրկվեց նաև Սասանյան Իրանը: Արաբական տիրապետության շրջանում՝ իսլամի գաղափարախոսության տարածմանը զուգահեռ՝ VIII դարասկզբինց խալիֆայությունում արաբերենը հռչակվեց որպես պետական լեզու, որով էլ սկսեցին ստեղծագործել բոլոր հպատակները, այդ թվում նաև՝ պարսիկները, որոնք չափազանց մեծ դեր ունեցան արաբա-իսլամական մշակույթի ձևավորման և զարգացման գործում: Հանգամանք, որն, իր հերթին, որոշակի դատարկություն առաջացրեց բուն Իրանի մշակութային հսկա ժառանգության ավանդույթներում:

Արաբերենը՝ իսլամի լեզուն, շատ հեղինակների համար դարձավ գրելու և ստեղծագործելու հիմնական լեզու: Հաճախ պարսկերենին լավ տիրապետելուն զուգահեռ, պարսիկ հեղինակները նախընտրում էին Ղուրանի լեզվով շարադրել իրենց երկերը: Ապա՝ միևնույն գործիչների ջանքերով արաբները հնարավորություն ստացան ծանոթանալու հին իրանական գրավոր մտքին և հարուստ քաղաքակրթությանը: Օրինակ, արաբական պատմական գրականության աստիճանական զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ իրանական արքաների, ժողովուրդների առասպելների և էպիկական ասքերի մասին հայտնի մատյանը՝ «Իսվաթայ-նամակը» (խողայ նամե), որն VIII դարում փառիլավերենից

արաբերեն թարգմանվեց պարսիկ արձակագիր և ադաբի գրականության հիմնադիր Իբն ալ-Մուկաֆայի (մեռ. 756թ.) կողմից: Նրա ստեղծագործություններից է նաև արևելյան հայտնի առակների ժողովածու «Քալիլա և Դիմնա»-ի արաբերեն թարգմանությունն ու վերապատումը: Այդուհանդերձ, ինչպես դժվար չէ նկատել IX-X դարերից արաբական խալիֆայության աստիճանական քայքայման և իրանական անկախ ու կիսանկախ դինաստիաների հայտնվելուց հետո սկիզբ է առնում բուն պարսկերեն գրականությունը, որն, անշուշտ մեծապես կրում էր գերիշխող արաբախալամական մշակույթի ավանդությունների ազդեցությունը: Ահա, պարսկական տարաբնույթ գրավոր հուշարձանների խրթին նյութերի ողջ ատաղձի դասակարգման, մանրակրկիտ ուսումնասիրման հիման վրա էլ Ամիր Ջեյղամինն հաջողվել է շարադրել իր աշխատությունը:

Խնդրո առարկա թեմայի համար բացառիկ նշանակություն ունեցող բազմալեզու աղբյուրների և գրականության ու այլևայլ նյութերի մանրակրկիտ հետազոտությունը Ա. Ջեյղամինն հնարավորություն է ընձեռել շարադրել հայ արևելագիտության կողմից ցարդ ոչ ամբողջությամբ ուսումնասիրված ժամանակաշրջանի վերաբերյալ ինքնատիպ և հույժ ուշագրավ մի աշխատություն:

Ատենախոսությունը բաղկացաց է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից (152 էջ):

Աշխատությունը շարադրելու համար ատենախոսը գիտական քննական վերլուծության է ենթարկել IX-XVI դարերի հեղինակների նյութերը՝ ժամանակագրական հերթականությամբ: Ա. Ջեյղամին, վերլուծելով պարսկերեն դասական, ինչպես նշվեց, ավելի քան 200 տեքստերի վկայությունները, կարողացել է ցույց տալ ցեղանունների, տեղանունների և հատուկ անունների ժամանակային փոփոխություններն ու զարգացումները: Փորձ է արվել պարսիկ հեղինակների ստեղծագործություններում գտնել տարբեր ցեղանունների օգտագործման հնագույն վկայությունների իմաստային փոխակերպումը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ատենախոսը բացի պարսիկ հեղինակներից, օգտագործել է նաև միջնադարում պարսկերեն թարգմանված արաբալեզու պատմական երկեր, ինչպիսին են՝ IX-X դդ. ականավոր պատմիչ Թաբարիի պատմությունը, IX-X դդ. արտաբերելու որոշ աշխարհագիրների երկերը և այլն:

Ատենախոսությունն իր բովանդակությամբ և քննարկվող հիմնախնդիրների բազմազանության տեսանկյունից նորույթ է, որտեղ նկատելի է հեղինակի ինքնուրույն գիտական հետազոտություններ կատարելու կարողությունն ու հմտությունը:

Ատենախոսությունն ունի կուռ, թեմայի տրամաբանությամբ պատճառաբանված կառուցվածք, ինչը նպաստել է հեղինակի առջև դրված նպատակների և խնդիրների լավագույն ձևով իրագործմանը: Հրատարակված սեղմնագիրն ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Ինչպես ցանկացած աշխատանք, այնպես էլ ներկա ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից.

- Հարկ է նկատի ունենալ, որ միջնադարյան արաբալեզու հեղինակների՝ հատկապես պատմիչների, աշխարհագիրների, կենսագիրների և այլոց երկերում մեծապես աղավաղվել են օտար տեղանունները, ցեղանունները և անձնանունները, որոնք էլ, մեր կարծիքով, մուտք են գործել հեղինակի կողմից ուսումնասիրվող պարսկալեզու հեղինակների ստեղծագործությունները, որոնցից շատերը պետք է քննական վերլուծության ենթարկել:
- Կարծում ենք ճիշտ կլինի տալ տեղանունների և անձնանունների պարսկերեն տարբերակները:
- Արաբ հեղինակները «ֆարիս - فارس» ասելով նկատի ունեն «Ֆարս» նահանգը, երբեմն Պարսկաստանը «بلاد فارس», «ֆուրս- فرس» են կոչում պարսիկներին (էջ 6):
- Հեղինակն աշխատության տարբեր էջերում օգտագործում է «սիրիեյերեն» տերմինը (էջ 31): Այս պարագայում գուցե ճիշտ կլինի օգտագործել «ասորերեն» բառը:
- Գտնում ենք նախախլամական ժամանակաշրջանի՝ V-VI դդ. արաբ պոետ Ա՛նթարա բին Շադդադի բանաստեղծության մեջ հիշատակվող «դայլամ - ديلم» բառը որևէ աղերս չունի իրանական «դայլմ»-ի հետ: «Դայլամ» բառն արաբերենում ունի մի քանի իմաստներ, ինչին, անշուշտ, անդրադարձել է ինքը՝ ատենախոսը: Կարծում ենք, որ այս դեպքում արաբ պոետի տվյալ արտահայտությունները (տես էջ 39-40) վերաբերում են պատմական Արաբիայի «Դայլմ» բեդվին ցեղին:
- Իբն Խուրդաբեյհը, ալ-Մասուդին, ալ-Իստախրին և ալ-Մուկադդասին IX-X դդ. արաբական դասական աշխարհագրության հայտնի ներկայացուցիչներ են, ոչ թե՛ պատմիչներ (տես էջ 62):
- Չենք կարող համաձայնել ատենախոսի այն կարծիքի հետ, որ արաբական պատմագրության մեջ և նոր պարսից գրականության վաղ շրջանի տեքստերում «քուրդ» էթնոնիմը օգտագործվել է բացառապես «հովիվ», «անասնապահ» իմաստով (63-66, 113-114): Հարկ է նշել, որ «քուրդ» տերմինը և

նրան համահունչ անվանումները քուրդ ժողովրդի էթնիկական հիմնախնդրի ուսումնասիրության կապակցությամբ վաղուց ի վեր մեծ հետաքրքրություն են առաջացրել արևելագետների շրջանում: Արաբական աղբյուրների ու այլևայլ նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ, իրոք, մահմեդական միջնադարում «քուրդ» տերմինը ունեցել է երկու նշանակություն: Այն բացի էթնոնիմ դիտարկվելուց, ընկալվել է իբրև անասնապահ-քոչվոր: Պատահական չէ, որ նման տենդենցը առաջին հերթին նկատվել է բուն իրանական ժողովուրդների մոտ: Օրինակ, Համզա ալ-Իսֆահանին (X դար) ընդգծում է, որ պարսիկները իրանական դայլամներին կոչում էին «Թաբարիստանի քրդեր», իսկ արաբներին՝ «Սուրիստանի քրդեր»: Այլ խոսքով, նման դատողությունները, որոնք միջնադարում «քուրդ» տերմինի գործածման խնդրում դարձան շփոթության աղբյուր, զուտ իրանական երևույթ է, որը «վրանաբնակ», «հովիվ»՝ «Քուրտան չաբանան» իմաստով օգտագործվել է դեռևս VI դ. կազմված Սասանյան դինաստիայի հիմնադիր Աիտաշիր Պապականի «Քառնամակ» առասպելական և պատմական տեղեկությունների ստեղծագործության մեջ: Այլ կերպ ասած, «քուրդ» որպես սոցիալական եզրույթ՝ «քոչվոր», «անասնապահ» իմաստով իրանցիների միջոցով հայտնվել է արաբալեզու հեղինակների երկերում նույնպես:

- Գտնում ենք, որ հարկավոր է զգուշորեն օգտագործել «ազգ» եզրույթը այս կամ վայրի բնակիչների կամ ցեղերի մասին խոսելիս:
- Աշխատությունում առկա են կրկնություններ և տեխնիկական վրիպակներ:

Այս և այլ կարգի դիտողությունները բնավ ստվեր չեն գցում Ա. Ջեյլամիի գիտական արժեքավոր աշխատության վրա: Անառարկելի է, որ, լինելով խնդրո առարկա թեմայի համակողմանի ուսումնասիրություն, լույս է սփռում նրա շատ ասպեկտների վրա: Ընդհանուր առմամբ, Ա. Ջեյլամիի աշխատությունը հաջողված գործ է, ունի գիտակիրառական կարևոր նշանակություն: Հեղինակի եզրակացությունները հիմնավոր են և համոզիչ:

Ելնելով վերոնշյալից՝ միջնորդում եմ Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի մասնագիտական խորհրդի առջև՝ Ա. Ջեյլամիին շնորհել իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, որին նա լիովին արժանի է:

